որ թիւրքերը թոյլ կը տան իրեն բերդի պաշարն ու ռազմամթերքը տեղափոխելու Թիֆլիս...

Ապր. 12-ին, երեկոյեան ժամը 9-ին Կարս մտաւ թիւրքական 11րդ դիվիզիայի առաջապահ մասը:

Կարսից հեռանալու պահուն զօր. Նազարբէգեանը Թիֆլիսից ստացաւ հետեւեալ հեռագիրը. «Ցայտնում եմ ձեզ ի գիտութիւն, որ Կարսի նահանգը մինչև Ախուրեան գետի երկարութեամբ անցնող սահմանը պէտք է պարպւի մեր զօրքերից: Ալեքսանդրապոլի՝ Ախուրեանի աջ ափին գտնուող ամրութիւնները պէտք է ոչնչացուն: Կառավարութիւնը հարց է յարուցել, որ թիւրքիան մէկ ամիս ժամանակ տայ մեզ՝ զուրս տանելու համար Կարսի բերդի ամբողջ զոյքը և մէկ շաբաթ՝ մեր զօրքը Կարսի նահանգից հեռացնելու համար: Անդրկովկասի վարչապետ՝ Զիսենկիլի: Պատերազմ. նախարարի պաշտօնակատար՝ Օդիշելիձէ»:

Սակայն, հակառակ, որ թիւրքերի բոլոր պայմաններն ընդունել էին, թիւրք բանակը չդադարեցրեց զինուորական գործողութիւնները, և մեր զօրքերը կռուով նահանջեցին մինչև Ալեքսանդրապոլ: Ապր. 15-ին, հայկական բանակը ամբողջովին անցաւ Ախուրեանի ձախ ափը՝ նախօրօք պայթեցնելով աջ ափի ամրութիւնները:

Քիչ յետոյ, ապր. 17-ին, Կարսից հեռացաւ և զօր. Դէյեւը իր ընկերների հետ, ինչպէս նաև մնացած բնակչութիւնը: Թիւրքերը վճռականօրէն մերժեցին Կարսի զոյքից որև է բան յանձնել: Զինուորականներին ազատ թողին — դրա համար էլ պէտք էր շորհակալ լինել...

Կարսի կռիւներում ընկան շատ քաջ մարտիկներ: Ապր. 9-ին, խիզախ դրոհի ժամանակ, սպանուեց սպայ Սուրէն Թադէոսեանը՝ յայտնի հասարակական գործիչ Արշակ Թադէոսեանի որդին, ապր. 12-ին, Մագրայի մօտ, նահանջի ճանապարհը պաշտպանելիս, հերոսի մահով մեռաւ Կարսի քաղաքագլխի որդին՝ կամաւոր Գէորգ Նոհրատեանը:

Կարսի դէպքերի լուրը Թիֆլիսում ստացուեց միայն ապր. 11-ի կէսօրից յետոյ: Հայկ. Կորպուսի կոմիսար Ս. Մանասեանին մեծ դժուարութեամբ յաջողուել էր ուղիղ հեռագրաթելի մօտ կանչել Սէյմի անդամ Ս. Վրացեանին ու հաղորդել Զիսենկիլիի հեռագիրների և ստեղծուած կացութեան մասին, ինչպէս նաև խնդրել, որ Ազգ. Խորհուրդը միջոցներ ձեռք առնի՝ երկարաձգելու Կարսի պարպման ժամանակամիջոցը:

Այս տեղեկութիւնը ռումբի պէս պայթեց հայկական շրջաններում: Ազգային Խորհուրդը դումարեց արտակարգ նիստ: Խաչ. Կարճիկեանը և Ստ. Մամիկոնեանը անմիջապէս հեռագրաթելով կապուեցին զօր. Նազարբէգեանի հետ՝ կամենալով փրկել Կարսը: Նազարբէգեանի պատասխանը եղաւ կարճ. այլեւս ուշ է: «Ես զինուորական նախարար Օդիշելիձէի միջոցով ստացայ կառավարութիւնից բացորոշ հրաման՝ դադարեցնել Կարսի մօտ պատերազմական գործողութիւնները և թոյլ տալ, որ թիւրքական զօրամասերը մինչև երկու վերստ մօտենան Կարսի ամրութիւններին. այժմ տեղի են ունենում բանակցութիւններ Կարսը պարպելու մասին»:

Կարսի պարպումի լուրը ահագին փոթորիկ առաջ բերեց և Սէյմի ու